ԿՐԿԻՆ ՍԵՆ-ՇԱՊԵԼԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տիրան Մարութեան

Որեւէ յուշարձանի վերակազմութիւն նախագծելիս աւերակից վերցուում է հնարաւոր առաւելագոյնը, քանի որ դա ամենակարեւորն է եւ երբեմնի կանգուն յուշարձանին առաւել մօտ, ճշմարտանման նախագիծ ստեղծելու համար։

Բոլոր դէպքերում, որպէս կանոն, նախ ուսումնասիրւում են պեղումներով բացուած յուշարձանի բոլոր մնացորդներն իրենց տեղում, այնուհետեւ արձանագրութիւնները, մանրակերտը, եթէ բախտի բերմամբ այդպիսին եղել է, նաեւ՝ նոյն ժամանակներում կառուցուած կանգուն կամ աւերակ նոյնատիպ եւ այլ յուշարձաններ, գրաւոր նկարագրութիւններ, նկարչութեան եւ մանրանկարչութեան, քանդակագործութեան եւ կիրառական արուեստի գործեր, որոնք այս կամ այն չափով, ուղղակի կամ անուղղակի առնչւում են տուեալ յուշարձանին։

Այս առումով Զուարթնոցի վերակազմութեան համար միւս նիւթերի շարքում կարեւոր տեղ են գրաւում այն երեք հարթաքանդակները, որոնց մասին խօսւում է ստորեւ։

Փարիզի Աստուածամօր տաճարի դիմաց մինչեւ այսօր կանգուն է 1243-1248 թուականներին կառուցուած, առաջներում՝ Արքայական, այժմ՝ Արդարադատութեան պալատին կից եկեղեցին՝ Սեն-Շապելը։ Այդ եկեղեցու երկրորդ յարկի բաց սիւնասրահում՝ աղօթասրահի գլխաւոր մուտքի ձախ քարակոփ պատին, պահպանւում է թեմատիկ հարթաքանդակների մի շարք՝ աստուածաբանական-դիցաբանական բովանդակութեամբ։

Այդ քանդակներից մէկի վրայ պատկերուած է Նոյեան տապանի շինարարութիւնը, պատկերի աջ կողմում՝ գետնի վրայ[1], երեւում է մի եկեղեցական շէնք։ Յաջորդ քանդակում արդէն պատրաստ Նոյեան տապանն է, վերահաս ջրհեղեղից խուսափող զանազան կենդանիներ թեք տախտակամածի վրայով բարձրանում են նաւը, ուր նախօրօք տեղ են գրաւել մարդիկ՝ չորս հոգի։ Այն եկեղեցական շէնքը, որը նախորդ քանդակում գետնի վրայ էր, այժմ տապանի վրայ է։ Քանդակներից երրորդում պատկերուած է հեղեղուած աշխարհը, ջրերի վրայ միայնակ Նոյեան տապանն է, որ տանում է մարդկանց ու եկեղեցական շէնքը։ Պատկերի աջակողմեան մասից, որտեղ եղանակը պարզուել է, մօտենում է թեւատարած մի աղաւնի՝ կտուցում մի շիւղ, որպէս մօտակայ ցամաքի նշան։

---

1 Հեղինակը սխալւում է. եկեղեցական շէնքն այս պատկերում արդէն իսկ տապանի մէջ է։ Հեղինակի սխալմունքը պայմանաւորուած է իր ձեռքի տակ գտնուող, դեռեւս 1959 թ. արուած սիրողական սեւ-սպիտակ լուսանկարների վատ որակով։ Ներկայ յօդուածում տեղ գտած լուսանկարներն արուած են 2008 թ.։ Դրանց հեղինակը ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Լեւոն Աբրահամեանն է, ում յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը լուսանկարների սիրայօժար տրամադրման համար։

Յիշեալ քանդակների նոր մեկնաբանմամբ[2] *պարզորոշ ասւում էր. 1. Նոյեան տապանի վրայի եկեղեցական շինութիւնը մեր Զուարթնոց տաճարի վերապատկերումն է: 2. Այդ քանդակները կատարուել են տաճարի կառուցմանը զուգընթաց: 3. Վերոյիշեալ պատկերների քանդակողը պէտք է որ հայ եղած լինի, այն վարպետ-ճարտարապետներից մէկը, ով Եւրոպա է հասել նոյն ճանապարհներով, որով անցել-տարածուել է քրիստոնէութիւնը: 4. Նկատի ունենալով, որ Զուարթնոցը կործանուել է Սեն-Շապելի կառուցումից մօտ 250 տարի առաջ, քանդակողը, տեսած չլինելով այդ տաճարը կանգուն վիճակում, նրա պատկերին պէտք է ծանօթ եղած լինի կա՛մ մանրակերտի, կա՛մ գրականութեան, մանրանկարչութեան նիւթերից, որոնք յետագայում ոչնչացուել, անհետացել են մեր մշակոյթի շատ ու շատ այլ կոթողների հետ օտար ասպատակութիւնների հետեւանքով: 5. Ի վերջոյ, յիշեալ քանդակապատկերներն ասում են, որ Զուարթնոցը եղել է եռաստիճան, եւ որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է բոլորակ ձեւ, այսինքն՝ այնպէս, ինչպէս 55 տարի առաջ (1904 թ.) պատկերել է իր վերակազմութեան նախագծում մեծ գեղագէտ եւ գիտնական ճարտարապետ Թորոս Թորամանեանը: Սա այն կարեւորն է, որ պէտք է նկատի ունենան Զուարթնոցի վերակազմութեան՝ Թորամանեանի նախագծի ճշտութեան վիճարկողները: 6. Այսպիսով, Փարիզի քանդակը Զուարթնոցի համար ստանում է այն նշանակութիւնը, ինչ որ 1906 թ. յայտնաբերուած Գագկաշէնի մանրակերտը՝ Գագկաշէնի համար:*

Սեն-Շապելի հարթաքանդակների մեր նոր մեկնաբանութիւնն իր ժամանակին հետաքրքրում է շատերին, նրանցից ոմանք այն ողջունում են, արձագանքում, հաստատում, միւսները՝ չեն ընդունում, վիճարկում են ու մերժում:

Անցած քսան տարիների ընթացքում Զուարթնոցի թորամանեանական վերակազմութեան քննարկումներին զուգընթաց, շարունակաբար արծարծւում են նաեւ այս քանդակների եւ Զուարթնոցի ու զուարթնոցանման տաճարների առնչութիւնները:

Ճարտարապետ-գիտնական Մարտիրոս Գաւուկչեանը, բարձր գնահատելով երեւոյթը, գրում է. «1243-1248 թուականներին կառուցուած Փարիզի Սեն-Շաբել եկեղեցու բարձրաքանդակները Զուարթնոցի վերակազմութեան հարցի համար խոշոր յայտնութիւն եղան»[3]*:*

Փարիզում 1962 թ. լոյս է տեսնում ֆրանսահայ ճարտարապետ Էդուարդ Ութուջեանի աշխատութիւնը, որտեղ առկայ հայ ճարտարապետութեան յուշարձանների շարքում, Զուարթնոցին նուիրուած նիւթերի հատուածում զետեղւում է Սեն-Շապելի վերոյիշեալ քանդակի երկու լուսանկար, որով հեղինակը կարծես թէ հաւաստում է իր համաձայնութիւնը, գրելով. «Սեն-Շապելի շքամուտքը, որտեղ պատկերուած է Զուարթնոցի եկեղեցին (?), այն նոյն տեղում, որտեղ նա գտնւում է Արարատ լեռան դիմաց, Նոյեան տապանի հետ մեկտեղ»[4]*:*

---

2 Տե՛ս **Տիրան Մարութեան**, *Մի նորայայտ վկայութիւն*,- «Գրական թերթ», 3 ապրիլի 1959 թ., թիւ 13. նոյնի, *Զուարթնոց եւ զուարթնոցատիպ տաճարներ. Ճարտարապետական-քննական ակնարկ*, Երեւան, 1963, էջ 117-118:

3 **Մարտիրոս Գաւուքչեան**, *Զուարթնոցի վերակազմութեան հարցը*,- «Գրական թերթ», 19 մայիսի 1972 թ., թիւ 21:

4 **Edouard Utudjian,** *Mission Technique en Armnie,* Paris, 1962,- Editions “Le Monde Souterrain”, p. 28.

Յովհաննէս Խալփախչեանը 1962 թ. յօդուած է տպագրում՝ նուիրուած Սեն-Շապելի հարթաքանդակների նոր մեկնաբանմանը, համաձայնում, որ այդպիսիք կերտել են հայ վարպետները: Նա այն կարծիքն է յայտնում, որ քանդակներում պատկերուած է ոչ թէ Զուարթնոցը, այլ Գագկաշէնը, որը ԺԳ. դարում, երբ կառուցւում էր Սեն-Շապելը, թէպէտ վնասուած, բայց դեռ գոյատեւում էր (ընդհուպ մինչեւ ԺԴ. դարը՝ 1319 թ.): Նա նաեւ գրում է, որ Սեն-Շապելի՝ յետագայում վնասուած քանդակները վերականգնուել են ԺԹ. դարում, եւ որ քանդակողը տապանի եւ շինութեան հարցում մնացել է հաւատարիմ նախնականին՝ միջնադարեան ձեւերին[5]:

Սեն-Շապելի քանդակներով, նրանց նոր մեկնաբանման կապակցութեամբ ժամանակին որոշակի հետաքրքրութիւն են ցուցաբերում Ռումինիայի՝ հայ արուեստին ծանօթ գիտնականները:

Սեն-Շապելի երկու քանդակների մեծադիր մի լուսանկար երկար տարիներ՝ մինչեւ 1978 թուականի աշունը, Զուարթնոցի թանգարանի կարեւոր ցուցանմուշներից էր:

Բայց ահա, Սեն-Շապելի հարթաքանդակների որեւէ առնչութիւն Զուարթնոցի հետ անվերապահ մերժման է արժանանում Ստ. Մնացականեանի կողմից: Եւ այդ հասկանալի է այն առումով, որ յիշեալ քանդակներն իրենց արտայայտութեամբ հաւաստում են ոչ թէ Ստ. Մնացականեանի, այլ Թորամանեանի վերակազմութեան մեծ հաւանականութիւնը:

Ստ. Մնացականեանը Սեն-Շապելի հարթաքանդակների նոր մեկնաբանմանն անդրադարձել է երեք անգամ[6]:

Եթէ առաջին յօդուածում, որ գրուած էր հապշտապ եւ հակաճառութիւնները գիտականօրէն կշռադատուած բնոյթ չունէին, ապա յաջորդ յօդուածում, որի հիմնական մասը նոյնութեամբ վերատպուել է 1971 թ. վերոյիշեալ գրքում, Ստ. Մնացականեանը ելնում է Յ. Խալփախչեանի 1962 թ. տպագրած յօդուածից՝ կռուան դարձնելով այն միտքը, որ դիտարկուող քանդակներում վարպետը լաւ է իմացել մարդակազմութիւնը, ապա եւ, նրանցում իբր առկայ է հեռանկարային կառուցման օրէնքների գործադրութիւնը, օրէնք, որը ԺԳ. դարում դեռ անյայտ էր, հետեւաբար, եզրակացնում է Ստ. Մնացականեանը, այդ քանդակները պատրաստուել են ոչ վաղ, քան ԺԷ. կամ ԺԹ. դարերում, երբ յիշեալ օրէնքը սահմանուած էր ու գործում էր, եւ «...երբ ոչ մի խօսք չէր կարող լինել Գագկաշէնի (էլ չենք ասում՝ Զուարթնոցի ձեւերի) վերարտադրութեան մասին»[7]:

Մնացականեանը շարունակում է. «Բաւական է նայել բուն տաճարի կամարաշարերին՝ համոզուելու համար, որ այստեղ եւս առկայ է քանդակագործի նոյն մօտեցումը՝ կենտրոնական կամարներն աւելի լայն են եւ, քանի գնում

5 **Յովհաննէս Խալփախչեան**, *Միջնադարեան Հայաստանի եւ Ֆրանսիայի մշակութային կապերի հարցի շուրջը (Սենտ-Շապելի բարձրաքանդակները,-* «Սովետական Հայաստան», 1962, թիւ 7, էջ 32-35:

6 **Ստեփան Մնացականեան**, *«Մի նոր վկայութիւն», որ արժանի է հերքման,-* «Սովետական արուեստ», 1959, թիւ 7, էջ 33-35. նոյնի, *Տ. Մարութեան եւ «Զուարթնոցը եւ զուարթնոցանման տաճարները», Հայպետհրատ, 1963. գրախօսութիւն,-* «Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի տեղեկագիր». Հասարակական գիտութիւններ, 1964, թիւ 2, էջ 99. նոյնի, *Զուարթնոցը եւ նոյնատիպ յուշարձանները*, Երեւան, 1971, էջ 208-210:

7 **Ստեփան Մնացականեան**, Զուարթնոցը եւ նոյնատիպ յուշարձանները, էջ 209:

են դէպի եզրերը, աւելի են նեղանում, փոքրանում»[8]:

Անկախ նրանից, որ ԺԳ. դարում «Մարդակազմութեան» դասընթաց (ներկայ իմաստով) դեռ չէր ստեղծուած, ինչպէս եւ առարկաների պատկերման հեռանկարային ներկայ օրէնքները բանաձեւի տեսքով չէին սահմանուած, քանդակագործները մարդկանց եւ կենդանիներին, նաեւ շինութիւնները մեծ մասամբ պատկերում էին միանգամայն նորմալ, ինչպէս որ բնութեան մէջ տեսնում էին: Որպէս ասուածի ապացոյց յիշենք հին յունական անկրկնելի քանդակները, որոնցում «մարդակազմութիւնը» անթերի էր, նաեւ՝ հայ մանրանկարչութեան Ժ.-ԺԱ. դարերի որոշ օրինակներ, որոնցում շինութիւնները պատկերուել են բնական՝ հեռանկարային տեսքով: Եւս մի օրինակ. 1215 թ. այսինքն՝ ԺԳ. դարի սկզբին Անիի Տիգրան Հոնենցի կառուցած եկեղեցում իրականացուել է Տրդատ թագաւորի շքերթի որմնանկարը: Դրանում ձիու վրայ առջեւից ընթացող Տրդատը պատկերուած է աւելի բարձր, քան նրան ձախից հետեւող արխազաց, վրաց եւ աղուանաց թագաւորները, նաեւ աջակողմից ընթացող երեք հեծեալները:

Սրանով կարելի է համոզուել, որ միջնադարի արուեստագէտների գործերում հեռանկարային պատկերումը գոյութիւն ունէր, թէպէտ եւ «օրէնքները» դեռեւս սահմանումներ չունէին:

Ներկայ դէպքում Սեն-Շապելի քանդակներում ինչպէս կենդանիները, նոյնպէս եւ շինութիւնը պատկերուել են առանց «հեռանկարային օրէնքների» գործադրման: Այստեղ խոշոր կենդանիները՝ կովը, առիւծը խոշոր էլ պատկերուել են, փոքրերը՝ խոյը, խոզը, թռչուններն ու միւս կենդանիները, փոքր էլ պատկերուել են:

Շինութեան կենտրոնական կամարները կողայիներից լայն են ոչ թէ հեռանկարային պատկերաւորման շնորհիւ, ինչպէս կարծում է Ստ. Մնացականեանը, այլ յատակաձեւում բոլորակ շինութիւնն ուղիղ հարթութեան վրայ կրճատումով պրոյեկտելու շնորհիւ, ինչպէս սովորաբար լինում են բոլորակ շինութիւնների ճակատների գծագրերում:

Այսպիսով՝ պարզւում է, որ Սեն-Շապելի քանդակների ոչ սկզբնականը լինելու տեսական պատճառաբանութիւնները զուրկ են բաւարար հիմքից: Ինչ վերաբերում է նրան, որ քանդակները վնասուել են եւ նորոգուել, ապա պէտք է համոզուել, որ քանդակողը հաւատարիմ է մնացել սկզբնականին. դա ընդունուած կանոն է, որ արուեստի վնասուած յուշարձանները վերականգնում են՝ հաւատարիմ մնալով սկզբնականին:

Սեն-Շապելի հարթաքանդակների եւ Զուարթնոցի առնչութիւններին է անդրադարձել նաեւ Պ. Դոնաբեդեանը[9]: Յօդուածի հեղինակը նկատում է. «Ինչպէս երեւում է Սենտ-Շապելի քանդակների հարցին վերաբերող յօդուածների հակիրճ ակնարկից, բանավէճի կենտրոնական տարրերից մէկը հանդիսանում է երեք զարդաքանդակների կատարման ժամանակը»[10]:

Ելնելով բանավէճի այս ընկալումից՝ հեղինակն իր յօդուածը հիւսել է հէնց այդ հարցի շուրջ եւ միայն դրա հի-

8 Նոյն տեղում:

9 Տե՛ս **Պատրիկ Դոնաբեդեան**, *Փարիզի Սենտ-Շապել եկեղեցու հարթաքանդակների հարցի շուրջը*,- «Պատմաբանասիրական հանդէս», 1977, թիւ 1, էջ 262-266:

10 Նոյն տեղում, էջ 263:

ման վրայ յանգել որոշակի եզրակացութեան. «…որ Նոյեան տապանը պատկերող երեք հարթաքանդակները ստեղծուել են անցեալ դարում, Սենտ-Շապելի վերանորոգման ժամանակ, եւ որ նրանք չեն վերարտադրում միջնադարեան նախօրինակները»[11]:

Պ. Դոնաբեդեանը, փորձելով մեզ համոզել, որ Սեն-Շապելի քանդակները ԺԹ. դարի գործեր են, միաժամանակ խոստովանում է. «Ճիշտ է, այդ գերեզմանի (խօսքը վերաբերում է Քրիստոսի գերեզմանին – Տ. Մ.) ստոյգ սկզբնական ճարտարապետական յօրինուածքն անցեալ դարում անյայտ էր (Հ. Վենսանը եւ Մ. Աբէլը գերեզմանի ռոտոնդաձեւ յօրինուածքի վերաբերեալ իրենց ուսումնասիրութիւնների արդիւնքները հրապարակեցին միայն 1914 թ., գիրքը հրատարակուել է 1920 թ., այսինքն՝ Թորամանեանի՝ Զուարթնոցի վերակազմութեան հրատարակումից տարիներ անց – Տ. Մ.), սակայն պէտք է ենթադրել, որ Սեն-Շապելի վերականգնողները քաջատեղեակ էին միջնադարեան նկարչութեանը եւ զարդակիրառական արուեստին, եւ որ մանրանկարներից ու փղոսկրեայ կազմերից նրանց յայտնի էին գերեզմանի այցելութեան բազմաթիւ պատկերները, որտեղ գերեզմանը բազմայարկ ու աշտարակաձեւ է, երբեմն էլ՝ ռոտոնդաձեւ»[12]: Չխօսելով այն մասին, որ ամէն «ռոտոնդա» դեռ Զուարթնոց չէ՝ նկատենք սակայն, որ այս մէջբերման սկզբնամասն ու վերջը միմեանց ամբողջութեամբ բացասում են. սկզբում ռոտոնդաձեւութիւնը «անյայտ էր», վերջում՝ «բազմաթիւ պատկերներ երբեմն էլ՝ ռոտոնդաձեւ»: Սրանցից մէկն ու մէկը, իսկ մեր համոզմամբ՝ վերջնամասը, իրականութեանը չի համապատասխանում՝ լոկ յայտարարութիւն է:

Բանն այն է, որ այս հարցն այժմ ոչ մի նշանակութիւն չունի, քանի որ Սեն-Շապելի հարթաքանդակների իրականացման ժամանակը հարցի լուծման վճռորոշ կողմը չէ. այն նոյնիսկ կարող էր աշխարհ եկած լինել ընդհուպ մեր դարի սկզբում, երբ դեռ չկար Թորամանեանի վերակազմութիւնը եւ յայտնի չէր Գագկաշէնի մանրակերտը. չէ՞ որ մինչեւ այսօր էլ այդ էքսպոնատների մի իրական կրկնօրինակ չի ստեղծուած: Դրա հիման վրայ մենք դարձեալ իրաւունք կ ունենայինք դրանք համարել Զուարթնոցի վերապատկերում՝ աղբիւր-նախօրինակի հարցը թողնելով որպէս այլ քննարկման առարկայ:

Սեն-Շապելի հարթաքանդակների շուրջ ցարդ շարունակուող բանավէճերում անհարկի քննութեան ոլորտ են ներքաշւում երբեմն անկարեւոր կողմեր՝ մինչեւ վերջ չբացայայտելով հարցի հիմնականը, էութիւնը:

Այժմ կարեւորն այն է, որ Փարիզի Սեն-Շապել եկեղեցում պահպանւում են որմնաքանդակներ, որոնք անվիճելիօրէն հանդիսանում են Զուարթնոցի կամ Զուարթնոցը կրկնող տաճարներից որեւէ մէկի վերարտադրութիւնը: Աշխարհում չկայ մի ուրիշ շինութիւն, որ իր արտաքին արտայայտչապատկերով այնպէս նմանուէր մի կողմից՝ յիշեալ քանդակներում պատկերուած շինութեանը, միւս կողմից՝ Զուարթնոցին, Գագկաշէնին ու մասամբ՝ Բանակին: Միայն սրանք են, որ նոյնական են:

Սեն-Շապելի դիտարկուող հարթաքանդակների եւ Զուարթնոցի առնչութիւնները վիճարկողներն անցած 20 տարիների ընթացքում շատ գրեցին, բայց եւ ի վիճակի չեղան ներկայացնել մի այլ շինութեան պատկեր, որ նոյնքան

11 Նոյն տեղում, էջ 264:

12 Նոյն տեղում, էջ 265:

նման լինէր այդ քանդակներին, եւ ապա Զուարթնոցին ու նրա նմանակներին (Սեն-Սաւենի մասին կը խօսուի ստորեւ):

Զարմանալին այն է, որ յիշեալ առնչութիւնները ժխտողները, միաժամանակ չեն ժխտում վերոյիշեալ էքսպոնատների առկայ նմանութիւնները, սակայն այդ երեւոյթը չեն գնահատում պրոֆեսիոնալ-մասնագիտօրէն: Օրինակ՝ Ստ. Մնացականեանը գրում է «…այն արտաքին, զուտ ձեւական նմանութիւնը, որը կայ *Տ. Մարութեանի կողմից բերուած* այդ պատկերաքանդակի եւ Գագիկաշէնի միջեւ, *ոչ մի հիմք չի կարող տալ այդքան հեռու գնացող եզրակացութիւնների համար» (ընդգծումներն իմն են – Տ. Մ.)*[13]*:*

Գրեթէ նոյն ձեւով է արտայայտւում նաեւ Պ. Դոնաբեդեանը՝ գրելով, թէ «…Սենտ-Շապելի քանդակի նմանութիւնը Զուարթնոցի եւ Գագկաշէնի հետ *պատահական բնոյթ է կրում» (ընդգծումներն իմն են – Տ. Մ.)*[14]*:*

Եթէ այլ ասպարէզներում «արտաքին, զուտ ձեւական» նմանութիւնը հնարաւոր է, որ անկարեւոր լինի, ապա ճարտարապետական արուեստի կոթողների ոճական, կոմպոզիցիոն յօրինուածքի եւ այլ կողմեր բնորոշելու համար «արտաքին, զուտ ձեւական» նմանութիւնն ունի առաջնակարգ, նոյնիսկ՝ վճռական նշանակութիւն, եւ այդ իրական երեւոյթը ոչ թէ պիտի արհամարհուի, այլ ըստ ամենայնի գնահատուի, եւ հէնց դրա հիման վրայ էլ «հեռու գնացող եզրակացութիւններ» կայացուեն:

Պ. Դոնաբեդեանը, ծանօթանալով գրականութեան մէջ հանդիպող՝ Սեն-Շապել եկեղեցուն վերաբերող նիւթերին, յիշեցնում է, որ «1793 թ. նոր կառավարութեան հրամանով քանդուեցին տաճարի վրայ գտնուող, ֆէոդալիզմի եւ միապետութեան հետ առնչուող բոլոր նշանները (իսկ դրանց մեծ մասը գտնուում էր արեւմտեան շքամուտքի վրայ)»[15] *: Նա նաեւ գրում է, որ «1630 թ. մեծ հրդեհից յետոյ տաճարի ծածկը փլուեց եւ երկրորդ յարկը վնասուեց»*[16]*: Ի վերջոյ, որպէս կարեւոր մտայանգում, գրում է. «Յամենայն դէպս, շքամուտքի գետնախարիսխի վիճակին վերաբերող գրուածքներում հաստատուած է, որ սկզբնական քանդակներից գրեթէ ոչ մի բան չէր մնացել 1793 թ. յետոյ»*[17]*:*

Եթէ իրօք անցեալ դարում վերականգնելիս յայտնի չի եղել սկզբնապէս գոյութիւն ունեցած քանդակների ինչ լինելը, ապա անհիմն է նաեւ պնդելը, թէ նորը սկզբնականի կրկնութիւնը չէ: Այդ մեզ յայտնի չէ: Միանգամայն հնարաւոր է, որ թէ՛ հինը, թէ՛ նորը նոյն նախօրինակի պատճէնները եղած լինեն:

Ափսոսանքով պէտք է նշել, որ Պ. Դոնաբեդեանի յօդուածում նոյնպէս առկայ է մի յատկանշական կողմ. դա այն է, որ որոշ հեղինակներ սկզբնաղբիւրների փաստերը մեկնաբանում են ոչ այնպէս, ինչպէս թելադրում է պարզ տրամաբանութիւնը եւ, ապա, ամենակարեւոր տեղերում նրանք չեն դիմում փաստացի եւ բառացի մէջբերումների, այլ իրենք են բնագրերը մեկնաբանում, ինչպէս այն հասկանում կամ, թերեւս, ինչպէս ուզում են հասկանալ եւ դրա հիման վրայ էլ յանգում են եզրակացութիւնների:

13 **Ստեփան Մնացականեան**, *«Մի նոր վկայութիւն», որ արժանի է հերքման, էջ 35:*

14 **Պատրիկ Դոնաբեդեան**, նշ. աշխ., էջ 266:

15 Նոյն տեղում, էջ 264:

16 Նոյն տեղում:

17 Նոյն տեղում:

Տուեալ դէպքում Պ. Դոնաբեդեանն իր յիշեալ յօդուածով յաւակնում է անհիմն համարել նախորդ հեղինակների մտայանգումները: Պէտք էր սպասել, որ այդ ցանկութիւնն իրականացնելու համար հեղինակը կը մտահոգուի եւ իր եզրակացութիւնների հաւաստիութիւնը կ ապահովի իր իսկ կողմից յիշուող «աղբիւրներում» տեղ գտած փաստերի ճշգրիտ մեկնաբանումներով եւ ապա՝ դրանց վերլուծական մեկնաբանութեամբ, որը սակայն տեղ չունի: Մասնաւորապէս, վերոբերեալ պնդումը՝ «Յամենայն դէպս, շքամուտքի գետնախարիսխի վիճակին վերաբերող գրուածքներում հաստատուած է, որ սկզբնական քանդակներից գրեթէ ոչ մի բան չէր մնացել 1793 թ. յետոյ»[18] *(ընդգծումն իմն է – Տ. Մ.), անտարակոյս պէտք է վաւերացուէր ճշգրիտ մէջբերումով:*

Պ. Դոնաբեդեանը տեղեկութիւններ է քաղում նաեւ Սորբոնի պրոֆեսոր Լուի Գրոդէքի՝ Սեն-Շապելին նուիրուած աշխատութիւնից, որն ամէն կերպ բացառում է Նոյեան տապանի առկայ քանդակների վերարտադրութիւն լինելը: Թւում է, թէ մեր յօդուածագիրը պէտք է որոշակի վերապահութեամբ վերաբերուէր պրոֆ. Լուի Գրոդէքի այդ հաղորդումներին՝ նկատի ունենալով նրա աշխատութեան համեմատաբար ուշ ասպարէզ գալը (1975 թ.), երբ արդէն մեզ մօտ եւ, յատկապէս ֆրանսիական մամուլում յիշեալ քանդակները դիտարկուել էին նոր մեկնաբանութիւններով՝ նրանց իրականացման գործում տեսնելով հայ վարպետների մասնակցութիւնը:

Պ. Դոնաբեդեանը, ծանօթանալով Սեն-Շապելի հին նկարագրութիւններին, հանդիպում է «դժուարիմաց հարթաքանդակներ» արտայայտութեանը. նա հնարաւոր է համարում ենթադրել, թէ այդ «տերմինի տակ պէտք է հասկանալ Նոյեան տապանը»[19]: Բայց եւ իսկոյն, հեռանալով այդ մտքից, տողատակում (16) նշում է. «Նոյ նահապետի պատմութիւնը՝ Աստուածաշնչի հանրաճանաչ էպիզոդներից մէկը, չէր կարող, իհարկէ, անհասկանալի թուալ ֆրանսիական հեղինակներին»:[20]

Պէտք է նկատել, որ, իրօք, ֆրանսիական հեղինակներին, եւ ոչ միայն ֆրանսիական, յայտնի է Նոյեան տապանի լեգենդը ու նրա պատկերաւորումը քրիստոնեայ ժողովուրդների մօտ, հետեւաբար՝ Սեն-Շապելի քանդակի այդ մասը նրանց հասկանալի կը լինէր, բայց հաւանաբար «դժուարիմաց» է մնացել եռաստիճան շինութիւնը, որ չի յիշւում Աստուածաշնչում:

Ըստ Պ. Դոնաբեդեանի՝ Սեն-Շապելի Նոյեան տապանի եռաստիճան շինութիւնը հանդիսանում է « Երուսաղէմի Քրիստոսի գերեզմանի խորհրդանշական պատկերը՝ ռոտոնդաձեւ, եռայարկ կառուցուածքի ձեւով»:[21] Ըստ Ստ. Մնացականեանի՝ այդ « բարձրաքանդակը կազմում է ֆրանսիական զարդարուեստի օրգանական մասը»[22]: Նա նաեւ գրում է. «Նոյն այս ռոտոնդաձեւ, եռայարկ կոմպոզիցիան իր որոշակի դրսեւորումն է գտնում 4-րդ դարի սկզբում Կոնստանդինոս կայսեր մօր՝ Հեղինէի կողմից, Քրիստոսի գերեզմանի վրայ կառուցուած տաճարում»[23]:

Բանն այն է, որ մինչեւ օրս յայտնի չէ, թէ Քրիստոսի գերեզմանի վրայ ինչ շի-

18 Նոյն տեղում:

19 Նոյն տեղում:

20 Նոյն տեղում:

21 Նոյն տեղում, էջ 265:

22 **Ստեփան Մնացականեան**, *«Մի նոր վկայութիւն», որ արժանի է հերքման,* էջ 35:

23 Նոյն տեղում, էջ 34:

նութիւն է եղել, թէ այն ինչ ձեւ է ունեցել։ Գոյութիւն չունի հնագոյն որեւէ քանդակ (թէկուզ եւ «փղոսկրեայ կազմի վրայ»), մանրակերտ կամ մանրանկար, եւ ոչ էլ՝ նկարագրութիւն, որն արտայայտէր Քրիստոսի գերեզմանի շինութեան ճշգրիտ ձեւը։ Առկայ են միայն ու միայն ենթադրութիւններ եւ այդ աննիւթական հիմքի վրայ մեր ժամանակներում որոշ հետազօտողների կողմից ստեղծուած վերակազմութիւններ։ Նոյնիսկ փղոսկրեայ կազմերի վրայ երեւացող, որպէս Քրիստոսի գերեզման ենթադրուող շինութիւնները միմեանցից բոլորովին տարբեր յօրինուածքներ ունեն։ Եւ այդ բնական է, քանի որ փղոսկրեայ կազմեր պատրաստողները, տեսած չլինելով գերեզմանի վրայ որեւէ շինութիւն, պատկերել են այնպէս, ինչպէս ենթադրել են, կամ ինչպէս աւանդաբար իրենց է փոխանցուել նախորդներից։ Այդպիսին է նաեւ Ստ. Մնացականեանի յիշատակած Կոստանդինոսի մօր՝ Հեղինէի կողմից Քրիստոսի գերեզմանի վրայ կառուցուած տաճարը, որից ոչինչ չի մնացել, նրա ձեւերը յայտնի չեն, վերակազմութիւններն էլ ենթադրական են։ Դրանք մի դէպքում եռաստիճան են՝ բոլորակ հիմքով, միւս դէպքում՝ բազմանիստ-աշտարակաձեւ եւ այլ ձեւերի։ Ըստ որում, դրանց հեղինակներից ոմանք պատկերներն ստեղծելիս անկասկած իրենց տրամադրութեան տակ ունեցել են ռէալ շինութիւնների վերակազմութիւններ, դրանց թւում նաեւ՝ թորամանեանական Զուարթնոցն ու Գագկաշէնը, ինչպէս եւ Կալգինի Բանակը։ Եւ ահա մեր օրերի այս հետազօտողները, Սեն-Շապելի ռէալ կրկնօրինակները թողած, ընկել, որոնում են երբեւէ չեղած մի պատկեր, որ նրանով ժխտեն ամէն առնչութիւն ռէալ յուշարձանների միջեւ։

Բայց իրօք, Քրիստոսի գերեզմանի վրայ ռէալ շէնք եղե՞լ է, թէ՞ ոչ։ Ընդհանրապէս յայտնի է, որ շարունակաբար գործող, կարեւոր տաճարները վնասուելուց յետոյ միշտ էլ նորոգուել, յարատեւել են։ Եթէ Քրիստոսի գերեզմանի վրայ յատուկ շէնք եղած լինէր, նա չէր կարող քրիստոնէութեան կենտրոն Երուսաղէմում անհետք մնալ, տեսքով մոռացուել։

Նոյ նահապետի եւ իր տապանի հետ կապուած լեգենդի պատկերումը, ըստ երեւոյթին, եզակի երեւոյթ չէ. այն հանդիպում է տարբեր ժողովուրդների արուեստի եւ պատմութեան նիւթերում։ Եւ ահա դրանցում բացակայում է Սեն-Շապելի բարձրաքանդակում առկայ շինութիւնը։ Եթէ Քրիստոսի գերեզմանի վրայ շինութիւն եղած լինէր ու նրա պատկերը տարածում գտած՝ ապա տուեալ լեգենդի պատկերի բոլոր տարբերակներում շէնքը կը լինէր։ Իրականում ոչ միայն Սեն-Շապելի քանդակներում, այլեւ մանրանկարչութեան շատ եւ շատ երկերում, միջավայրը ստեղծուած է տարբեր յօրինուածքների շէնքերի առկայութեամբ։ Դրանք վաղ միջնադարում կառուցուած նշանաւոր սրբավայրերի եւ զանազան շինութիւնների վերարտադրութիւններ են։ Այս վերջիններիս պատկերներում կան նաեւ այնպիսիները, որոնք բազմայարկ են, ճակտոնով, երբեմն՝ սիւնազարդ։ Դրանք վերացական չեն, կոնկրետ օբիեկտների իւրովի մեկնաբանութիւններ են։

Երբ Ստ. Մնացականեանը համաձայնում ու գրում է, թէ «…որոշ արեւմտաեւրոպական ուսումնասիրողներ Զուարթնոցը մինչեւ իսկ նոյն այդ Քրիստոսի գերեզմանի տաճարի օրինակով կառուցուած յուշարձան են համարում»[24], նա պէտք է այդ ուսումնասիրողներին առաջարկէր նախ ցոյց տալ Քրիս-

24 Նոյն տեղում։

տոսի գերեզմանի պատկերը, ապա փորձէր մեզ համոզել դրանում։ Եթէ Զուարթնոցը Քրիստոսի գերեզմանի շինութեան կրկնութիւնն է, ապա այն պիտի Երուսաղէմի շէնքերի ձեւն ունենար, որովհետեւ Երուսաղէմի շէնքերը պէտք է որ աւելի վաղ նմանուէին Քրիստոսի գերեզմանի շէնքին։ Այդ ինչպէ՞ս եղաւ, որ մօտիկները չնմանուեցին, հեռաւոր Զուարթնոցը նրան կրկնեց։ Մեր համոզմամբ, այստեղ առկայ է ճիշտ հակառակ մի երեւոյթ. վերջին շրջանում Քրիստոսի գերեզմանի ենթադրեալ շինութեան ձեւը փնտրողները, ծանօթանալով թորամանեա նական վերակազմութեամբ Զուարթնոցի ազնուական ձեւերին, ենթադրում են, որ թերեւս մօտաւորապէս այդպիսին կարող էր լինել Քրիստոսի գերեզմանի շինութիւնը։ Ըստ որում, հնարաւոր է ենթադրել, որ Սեն-Շապելի կառուցման ժամանակներում նոյնպէս քանդակողներն այդ մտադրութիւնն ունեցած լինեն։ Դրանից ելնելով էլ նրանք այդ քանդակներում դրոշմել են Զուարթնոցը, ի դէմս նրա տեսել Քրիստոսի գերեզմանի շինութիւնը կամ Աստծոյ տունը երկրի վրայ։

Պ. Դոնաբեդեանի յօդուածի ամենաարժէքաւորը Սեն-Սաւեն վանքի ԺԱ.-ԺԲ. դարերի որմնանկարն է՝ նոյն Նոյեան տապանով, եռաստիճան, սիւնակամարաշար շինութեամբ, հեղեղից փրկուող մարդկանցով եւ կենդանիներով։ Ըստ որում, շինութեան՝ հիմքում բոլորակ լինելու հաւանականութիւնը հաւաստւում է նաեւ ճակտոնաւոր մուտքերի, ինչպէս Զուարթնոցում է, թեք դրուածքով։ Յօդուածում հեղինակը նշում է. «Թէեւ Սեն-Սաւենի որմնանկարի եւ Սենտ-Շապելի հարթաքանդակների նմանութիւնները սահմանափակ են, բայց որմնանկարի առկայութիւնը մեզ թոյլ է տալիս մտածելու, որ այդ պատկերը (Նոյեան տապանը եւ տապանի վրայ բարձր, եռայարկ, գուցէ բոլորակ, սիւնաշարքերով եւ կամարաշարքերով զարդարուած շէնքը) կարող էր նախատիպ հանդիսանալ Սենտ-Շապելի քանդակների համար»[25]։

Յօդուածագրի կարծիքով՝ Սեն-Սաւենի «Պարզունակօրէն պատկերուած յօրինուածքը բոլորովին չի յիշեցնում Զուարթնոցը»։[26] Մենք մեզ թոյլ ենք տալիս Սեն-Սաւենում աւելին տեսնել։ Եթէ Սեն-Շապելի եւ Զուարթնոցի կապն արտայայտւում է պատկերի միանման կոմպոզիցիայով՝ ծաւալատարածական յօրինուածքների ընդհանրութեամբ, առանձին աստիճանների նոյնական համաչափութիւններով, յարդարանքի նոյնաձեւ մշակումով, բոլորակ պատուհանների առկայութեամբ եւ այլ կողմերով, ապա Սեն-Սաւենում որմնանկարի խոշորութիւնը թոյլ է տալիս տեսնել ճարտարապետական ձեւերի, նոյնիսկ որոշ մանրամասների նոյնութիւնը Զուարթնոցի համապատասխան դրուագի հետ։

Այստեղ մարդիկ, նաեւ կենդանիները պատկերուած են «մարդակազմութեան» նոյն կանոններին համապատասխան, ինչպէս Սեն-Շապելում է. երկուստեք նոյնն են Նոյեան տապանն ու նրա վրայի շինութեան մանրամասները։ Դեռ աւելին՝ Սեն-Սաւենի հարթաքանդակում շինութեան երրորդ աստիճանի յարդարանքը կազմող սիւնակամարաշարում սիւները զոյգ-զոյգ են եւ ունեն ընդհանուր խոյեակ՝ հայ ճարտարապետութեան ամենայատկանշական երեւոյթներից մէկը։ Ճշտօրէն այդպէս է իրավիճակը Զուարթնոցի եւ Գագկաշէնի մեծ թմբկապատերի դեկորատիւ սիւնակամարներում, այդպէս է նաեւ զուարթնոցատիպ Բանակ տաճարում՝ համաձայն յուշարձանների ռէալ մնացորդների։

25 **Պատրիկ Դոնաբեդեան**, նշ. աշխ., էջ 266։

26 Նոյն տեղում, էջ 265։

Այլ ճարտարապետական շրջանակներում սիւները բարձրանում, հասնում են հորիզոնական հեծանին՝ արխիտրաւին, իսկ կամարները մնում են սիւներով ու հեծաններով ստեղծուած հարթութիւնների ներսում, մինչ հայ հին ճարտարապետութեան յուշարձաններում կամարներն անմիջականօրէն յենւում են սիւների խոյեակների վրայ (այս ձեւն աւելի ուշ տեսնում ենք նաեւ այլ ճարտարապետական շրջանակներում): Ճշտօրէն այդպէս է Սեն-Շապելի հարթաքանդակի շինութեան պատկերում, նոյնն է նաեւ Սեն-Սաւենի որմնանկարներում:

Ահա եւ պարզւում է, որ ինչպէս Սեն-Սաւենում, այնպէս էլ Սեն-Շապելի քանդակներում պատկերուած շինութիւնը յօրինուածքով կոնկրետ է, հաւաստի վերարտադրութիւն է ռէալ շինութեան: Նրանում ձեւերն արտայայտում են որոշակի ոճ: Այդ ոճը ո՛չ եգիպտական է, ո՛չ յունական կամ հռոմէական. այն նոյնիսկ բիւզանդական-սիրիական չէ: Առանց մեզ համարձակութիւն վերագրելու՝ կարող ենք ասել, թէ այդ պատկերում դրոշմուած շինութիւնը հայ ճարտարապետութեան յուշարձան է: Զուարթնոցից առաջ այդ յօրինուածքով, այդպիսի արտաքին յարդարանքով աշխարհում մի այլ շինութիւն գոյութիւն չունէր (հասկանալի է, որ քանդակողն իր ստեղծագործութեան համար որպէս նախատիպ ունենալու էր շինութեան առաւել հնագոյն օրինակը):

Ասուածից հետեւում է, որ Սեն-Սաւենի որմնանկարի եւ Զուարթնոցի ու իր նմանակների միջեւ անժխտելի է նմանութիւնը եւ որոշ մանրամասների նոյնութիւնը: Այս ռէալ իրողութիւն է, որին առաւել սթափ նայելը՝ պարզ անհրաժեշտութիւն է:

Յիշեալ որմնանկարի՝ Պ. Դոնաբեդեանի կողմից իր յօդուածին առընթեր ներկայացնելը որպէս Սեն-Շապելի հարթաքանդակին ինչ-որ չափով նման եւ նրա համար նախօրինակ, նշան է նրա, որ վերջինիս գոյութեան փաստը եզակի երեւոյթ է ու ճիշտ չէ Ստ. Մնացականեանի առաջ քաշած այն վարկածը, թէ « դա հէնց Քրիստոսի գերեզմանի վրայ կառուցուած ռոտոնդաձեւ տաճարն է, որի կերպարը, սկսած 6-7-րդ դարերից մինչեւ ուշ միջնադար եւ նոյնիսկ մեր ժամանակները, լայն տարածուած է թէ՛ մանրանկարչութեան մէջ, թէ՛ զարդարուեստում» *(ընդգծումն իմն է – Տ. Մ.):*[27] *Ինչպէս տեսնում ենք, Ստ. Մնացականեանի թէ՛ առաջներում բերած օրինակները եւ թէ՛ ներկայ գրաւոր «շատ տարածուածները» այլ բաներ են, իսկ Սեն-Շապելի քանդակները՝ այլ, որոնց նման որեւէ բան, այնուամենայնիւ, նա չի կարողանում ներկայացնել:*

Արդ, Սեն-Շապելի հարթաքանդակների նշանակութեան մասին Զուարթնոցի ընդհանուր յօրինուածքի ձեւերի ճշգրտման առումով մեր նախորդ հրապարակումներում գրել էինք. «Ի վերջոյ յիշեալ քանդակապատկերն ասում է, որ Զուարթնոցը եղել է եռաստիճան (трехъярусный), եւ որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է բոլորակ ձեւ»:[28] *Հարցի ճարտարապետական կողմն այս է, որ մինչեւ հիմա պահպանում է իր այժմէականութիւնը:*

Ահա այս եզրակացութիւնն է, որ առիթ է դարձել տարբեր յօդուածների երեւալուն՝ ուղղուած Սեն-Շապելի հարթաքանդակների՝ Զուարթնոցի հետ ունեցած առնչութիւնների ժխտմանը:

Բանն այն է, որ Թորամանեանի վերակազմութեան, աւերակի ռէալ

27 **Ստեփան Մնացականեան**, *Զուարթնոցը եւ նոյնատիպ յուշարձանները*, էջ 209:

28 **Տիրան Մարութեան**, *Մի նորայայտ վկայութիւն.* նոյնի, *Զուարթնոց եւ նոյնատիպ տաճարներ*, էջ 118:

տուեալների, այս հարթաքանդակների եւ այլ նիւթերի հիման վրայ վերջնական ճանաչումն ի չիք է դարձնում Ստ. Մնացականեանի առաջարկած վերակազմութեան, տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում, արտաքուստ հիմքում խաչաձեւ նախագիծը, որը բոլոր արմատական հարցերում տարբեր է նախորդից, կրում է առաւելապէս վերացական բնոյթ ու չի հիմնւում աւերակի ռէալ, փաստական տուեալներին: Դեռ աւելին՝ գտնւում է նրանց հետ հակասական վիճակում: Մինչ Թորամանեանի նախագիծը շարունակում է մնալ բոլոր վերակազմութիւններից լաւագոյնը, ամենահաւանականը:

Ամենահետաքրքիրը եւ նշանակութեամբ կարեւորն այն է, որ Սեն-Շապելի հարթաքանդակների նորովի մեկնաբանման վիճարկողների բերած օրինակները, հակառակ իրենց ցանկութեան, ուղղուած են իրենց թեզերի դէմ եւ միաժամանակ զգալի նպաստ են թորամանեանական վերակազմութեան հաւաստիութեան, քանի որ որպէս օրինակ բերուող բոլոր շինութիւններում բոլոր աստիճաններն իրենց հիմքում բոլորակ են:

Ճարտարապետական յօրինուածքային տրամաբանութեամբ ճիշտը, բնականը սա է, հակառակը չկայ եւ լինելու բան չէ:

Աւելի տրամաբանական է մտածել, որ Նոյն իր տապանով ջրհեղեղից փրկում էր ոչ թէ «երկինք համբարձած Քրիստոսի երկրային գերեզմանը», այլ «Աստծոյ տունը», որը ջրհեղեղից յետոյ պիտի գոյատեւէր եւ ծառայէր ըստ նշանակութեան:

Ամբողջ միջնադարի ընթացքում Հայաստանը կապուած է եղել ինչպէս հարեւանների, այնպէս էլ Արեւելքի ու Արեւմուտքի հեռաւոր երկրների հետ: Այս պայմաններում կարելի՞ է տարակուսել, թէ Զուարթնոցի պատկերը կարո՞ղ էր յայտնուել Ֆրանսիայում: Եւ վերջապէս, ի՞նչը պիտի խանգարէր, որ Է.-Ժ. դարերում մեծ հռչակ ստացած աննախադէպ կոթողի իւրօրինակ յօրինուածքն իր մանրամասներով յայտնի դառնար Ֆրանսիայում ու արձագանքը յարատեւէր մինչեւ ԺԳ. դար:

Պ. Դոնաբեդեանի կարծիքով՝ «Սեն-Սաւենի որմնանկարի գոյութեան փաստը, ինքնին, աւելի հաւանական է դարձնում այն վարկածը, ըստ որի Սենտ-Շապելի քանդակի նմանութիւնը Զուարթնոցի եւ Գագկաշէնի հետ պատահական բնոյթ է կրում»:[29]

Մենք հնարաւոր ենք համարում, ընդունելով ողջ վերոյիշեալը, յանգել տրամագծօրէն հակառակ եզրակացութեան, որ Սեն-Շապելից շատ էլ չտարբերուող Սեն-Սաւենի որմնանկարի գոյութեան փաստը դեռեւս ԺԱ.-ԺԲ. դարերում առաւել հաւաստի է դարձնում այն վարկածը, ըստ որի. ա) Սեն-Շապելի հարթաքանդակը ստեղծուել է տաճարի կառուցման ժամանակներում (1243-1248 թթ.), եւ եթէ այն երբեւէ ինչ-որ չափով վնասուել է, ապա վերականգնուել է ճշտօրէն սկզբնականի ձեւով, բ) Սեն-Շապելի քանդակը, նաեւ նրանից վաղ՝ ԺԱ.-ԺԲ. դարերում իրականացուած Սեն-Սաւենի որմնանկարը հանդիսանում են դեռեւս Է. դարի 40-50-ական թուականներին Արարատեան դաշտում կառուցուած Զուարթնոց տաճարի վերարտադրութիւնը, գ) ֆրանսիական արուեստի այդ յուշարձաններում աւելի քան որոշակի է հայ ճարտարապետութեան ոճական արտայայտութիւնը, մի երեւոյթ, որի գոյութիւնը հնարաւոր է դարձել շնորհիւ տուեալ յուշարձանների

29 **Պատրիկ Դոնաբեդեան**, նշ. աշխ., էջ 266:

կերտմանը հայ արուեստագէտների մասնակցութեան։

Անցեալ տարուայ [1978 թ.] սեպտեմբերին Երեւանում տեղի ունեցաւ հայ արուեստին ու ճարտարապետութեանը նուիրուած երկրորդ միջազգային սիմպոզիումը։ Մինչ այդ նորից այցելելով Զուարթնոց, ցանկանալով, որ հայրենի եւ օտարազգի գիտնականներն ու այցելուներն առաւել բարեկարգ տեսնեն յուշարձանը՝ «Երեկոյեան Երեւան» թերթում մի քանի տողով ներկայացրեցինք առաջարկներ[30]։ Դրանց թւում, մասնաւորապէս, յիշւում էին տարիներ առաջ մասնակի վերականգնման ժամանակ հարաւ-արեւելակողմի մի հանգոյցում իրականացուած սխալի շտկման, բազմաթիւ կարեւոր բեկորների պահպանութեան բարելաւման եւ վերջիններիս հաշուառման՝ քարտարան ունենալու յոյժ անհրաժեշտութիւնը։

Սիմպոզիումից յետոյ՝ նոր այցելութիւնների ընթացքում, պարզ դարձաւ, որ յուշարձանում տեղաշարժեր տեղի ունեցել էին, սակայն ինչպիսի՞։ Վերեւում յիշատակուած սխալը տարիներ ի վեր շարունակում է պահպանուել խիստ անձեռնմխելի. բոլոր բեկորները մնում են նախկին վիճակում, մի տարբերութեամբ միայն, որ թէպէտ առանց քարտերի եւ անոտացիայի, սակայն համարակալուել են, բայց եւ այնպէս՝ դուրս թողնելով որպէս «նշանակութիւն չունեցող», սակայն մեր գնահատմամբ՝ կարեւորագոյն բեկորներից որոշ քանակ։ Իսկ թանգարանո՞ւմ նրա տնօրէն Վարդան Յարութիւնեանի սեփական նախաձեռնութեամբ սիմպոզիումին նախորդած օրերին պատից իջեցուել եւ «պահեստաւորուել է» հետաքրքրագոյն ցուցանմուշներից՝ Փարիզի Սեն-Շապելի այն բարձրաքանդակի լուսանկարը, որը մեր հետազօտողներից մի քանիսի բացառութեամբ, ճանաչւում է որպէս Զուարթնոցի իւրայատուկ յօրինուածքի կրկնապատկեր։

Պարզւում է, որ թանգարանի տնօրէն Վարդան Յարութիւնեանը, ընթերցելով Պ. Դոնաբեդեանի ինֆորմացիա-յօդուածը վերոյիշեալ քանդակների վերաբերեալ, հարցը համարել է լուծուած յօգուտ յօդուածագրի, որ այդ « քանդակի նմանութիւնը Զուարթնոցի եւ Գագկաշէնի հետ պատահական բնոյթ է կրում» եւ որ նրա յետագայ ներկայութիւնը թանգարանում, այն էլ՝ սիմպոզիումի օրերին եւ յետոյ, աւելորդ է, եւ այն պարզապէս հանուել է ցուցադրութիւնից։

Նկատի ունենալով, որ Պ. Դոնաբեդեանի վերոյիշեալ յօդուածն իրերի վիճակում ոչինչ չի փոխում, դեռ աւելին՝ նրանում բերուած որոշ տուեալներ խորացնում են Սեն-Շապելի քանդակների եւ Զուարթնոցի առնչութիւնների միագամայն հաւաստի լինելը, մի բան, որ մեծ թուով մասնագէտների մօտ որեւէ կասկած չի յարուցում, կարծում եմ, որ Հայկական ՍՍՀ Պետշինի յուշարձանների նորոգման վարչութիւնը հնարաւոր կը համարի թանգարանի ցուցադրութիւն վերադարձնել Սեն-Շապելի բարձրաքանդակի լուսանկարը, թերեւս տեղ կը յատկացուի նաեւ միւս երկու քանդակների, ինչպէս եւ Սեն-Սաւենի որմնանկարի լուսանկարներին։

[1979 թ.]

30 Տե՛ս **Տիրան Մարութեան**, *«Միայն երեք բեկոր (պրպտումներ Զուարթնոցի աւերակում)»*,- «Երեկոյեան Երեւան», 1 ապրիլի 1978 թ., թիւ 77։